ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

«05» 12 2024 թ. N 1

Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի տնօրեն՝

Վարդան Հովհաննիսյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի միջև 29.12.2023թ-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-Վ-10» ծածկագրով «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում եք գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրով և գնման - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը և այն համարելով լուծված 435370.788 (չորս հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր յոթանասուն դրամ) ՀՀ դրամի, յոթ հարյուր ութանասունութ լումա չափով՝

պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանգրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանին տրվում է 5 օրացուցային օր տուժանքով սահմանված և պայմանագրի ապահովման 52773 /հիսուներկու հազար յոթ հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 79159.50 /յոթանասունինը հազար հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ, հիսուն լումա գումարները շահառուի 90000800664 հաշվի համարին փոխանցելու նպատակով: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կներկայացվի մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ